ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1963 Общественные науки

Ա. Մ. Արամյան

ՁԱՅՆՈՐԴՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Հայ լեզվաբանության մեջ բազմիցս նշվել է հայոց լեզվի շատ իրողություններ փորձառական հնչյունաբանության հայեցակետով վերլուծելու անհրաժեշտությունը։

Վերջին տասնամյակում փորձառական լեզվաբանությունը հսկայական քայլերով առաջ է անցել։ Դրան մեծապես նպաստել են մաթեմատիկական լեզվաբանության բնագավառում ծավալվող աշխատանքները։

Սկսելով իր պատմությունը անցյալ դարի 90-ական թվականներից[1], հայ փորձառական լեզվաբանությունը, սակայն, զարգացման պարբերական ընթացք չի ունեցել։ Հր. Աճառյանի հայ լեզվաբանության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող «Գրաբարի պայթական բաղաձայնները ժամանակակից բարբառներում» հետազոտությունը, որ հրատարակվել է Փարիզում 1899 թ. ֆրանսերեն լեզվով, չի ունեցել իր հաջորդները։ Այդ, սակայն, չի նշանակում, թե հայոց լեզվի հնչյունական կազմի փորձառական ուսումնասիրությունը որպես հայեցակետ մերժվել է։ Ժամանակ առ ժամանակ այդ հարցերին անդրադարձել է Գ. Սևակը և մի քանի անգամ հաղորդումներ է արել իր կատարած աշխատանքների մասին։ 1940 թ. Գ. Ա. Հովհաննիսյանի կողմից որպես դիսերտացիայի թեմա ձեռնարկվել է հայոց և ռուսաց լեզուների ձայնավորների հետազոտությունը՝ ֆիզիկական հայեցակետով։ Այնուհետև նորից մի երկար ընդմիջումից հետո՝ 1958 թ. պաշտպանվել է դիսերտացիա «Գրական հայերենի ձայնավորների փորձառական հնչյունաբանական ուսումնասիրությունն ու դասակարգումը» թեմայով, այս անգամ արդեն ֆիլոլոգիական հայեցակետով՝ տողերիս հեղինակի կողմից[2]։

Հայոց լեզուն իր բազմաթիվ բարբառներով, ձայնավորական և բաղաձայնական խիստ հետաքրքիր և յուրատեսակ համակարգերով անսպառ նյութ կարող է մատակարարել փորձառական հնչյունաբանությանը։

Լեզվական իրողությունների համեմատական ուսումնասիրություն սկսելուց առաջ հարկավոր է պարզել նախ՝ համեմատվող առարկաների բնույթն ու էությունը՝ առանձին վերցրած։ Միայն նման քննությունից հետո կարող են բացահայտվել այն նմանությունները և տարբերությունները, որոնք կան և գործում են համեմատվող երևույթների մեջ։

Այս տեսակետից հայերեն գրական լեզվի բաղաձայնական համակարգը բոլորովին անմշակ մի բնագավառ է։

---

[1] Տե՛ս Հ. Աճառյան, Les explosives de l'ancien Armenien etudiees dans les dialectes modernes ամսագիր „La parole revue internationale de rhinologie, otologie, laryngologie et phonetique experimentale", Paris, 1899.

[2] Ա. Մ. Արամյան, Հայերենի ձայնավորները (փորձառական ուսումնասիրություն), Երևան, 1962։

* * *

Գրական հայերենի բաղաձայնական համակարգում իրենց ուրույն տեղն են գրավում ձայնորդ բաղաձայնները։ Ունենալով թե՛ բաղաձայնի, թե՛ ձայնավորի հատկություններ, ձայնորդները դասվել են երբեմն բաղաձայնների, երբեմն էլ ձայնավորների շարքը։ Ձայնորդներից հատկապես յ-ն գայթակղության քար է հանդիսացել նրանց համար, որոնք որևէ ժամանակ զբաղվել են հայերենի հնչույթների դասակարգմամբ։

Հայերենի հնչույթների դասակարգումը մենք գտնում ենք դեռևս հայ առաջին քերականների մոտ։

«Դիոնիսոս Թրակացու» հայ մեկնիչները հնչյունները բաժանելով հիմնականում երկու մեծ խմբերի՝ ձայնավորների և բաղաձայնների, նայերը[3], այսինքն՝ խոնավները, ինչպես անվանում էին ձայնորդ հնչույթները հունական քերականության մեջ, դասում էին բաղաձայնների շարքը։ Բաղաձայն հնչույթներն իրենց հերթին համարվում էին ոչ միատարր, այլ բաժանվում էին նուրբ, ստվար (թավ) և միջակ տեսակների։ Դավիթ Փիլիսոփայի, Մովսես Քերթողի, ինչպես նաև Անանուն Մեկնիչի հայկական տեքստերում նայերի շարքն են դասվում չորս հնչյուններ՝ ղ, մ, ն, ր։

Հայ հին քերականները նայերը բնութագրելիս նկատի են ունեցել նաև նրանց որակական բնույթը, այսինքն՝ որ նայերն առավել ճկուն են, և հենց դրա շնորհիվ է, որ տարբեր ժամանակներում դրանք դասել են մե՛կ ձայնավորների, մե՛կ բաղաձայնների շարքը և կամ տվել են զանազան անվանումներ կիսաձայն, ձայնավորական բաղաձայն, ձայնակապ և այլն։ Այսպիսով «Դիոնիսոս Թրակացու» հայ մեկնիչները հանդիսացել են այն առաջին քերականները, որոնք գիտականորեն և հակիրճ ձևով շարադրել են հայերենի քերականությունը՝ ներկայացնելով նաև հայոց լեզվի հնչույթային կազմը՝ իր գիտական դասակարգմամբ։

Այնուհետև հաջորդող քերականագիտական աշխատություններում կամ դասագրքերում հայոց լեզվի հնչույթային կազմի ավանդական դասակարգումը էական փոփոխություններ չի կրել։

Վայ շրջանի հեղինակները (հիշենք Պազդասար Դպիրին, Հ. Ջրպետյանին, Ս. Բագրատունուն, այնուհետև Ջամչյանին, Այտընյանին, Բահաթրյանին, Գարագաշյանին, Պալասանյանին և շատ ու շատ ուրիշների) իրենց փոքր ու մեծ քերականական գործերում ներկայացրել են քիչ դեպքում գրաբարի և ավելի հաճախ արևելահայ կամ արևմտահայ աշխարհաբարի հնչույթային համակարգը։

Հետաքրքիր դասակարգման է ենթարկում հայերենի հնչույթները Ա. Այտընյանն իր «Հ. Վրթանիսի Ջալրխեան քերականութիւն Հայկազնեան լեզուի» (Վիեննա, 1885 թ.) աշխատությունում։

Հնչյունները ստորաբաժանելով ձայնավորների և բաղաձայնների, Այտընյանն առանձնացնում է այսպես կոչված թուլաձայն հնչյունները՝ ղ, մ, ն, ր, լ, հ, խ, ռ, վ, որոնցից առաջին չորսը համարում է նայեր։ Այստեղ հեղինակը

3 Հայ առաջին քերականները նայ տերմինը մեծ հավանականությամբ բխեցնում են պարսկական nam-խոնավ բառից։ Տե՛ս Ն ի կ. Ա դ ո ն ց, Արուեստ Դիոնիսեա քերականի և հայ մեկնութիւնք նորին, Պետրոգրադ, 1915, էջ CLVIII։

մի հետաքրքիր վերապահություն է անում. «Ուրիշ ամեն լեզվաց շորս նայերուն առաջինն է լ, իսկ մերն է ղ»[4]։

Այստեղ հետաքրքիրը ոչ թե այս է, որ ուրիշ լեզուների լ-ի փոխարեն հայերենն ունի ռ, այլ այն, որ նայերի խումբը սկսվում է ղ-ով։

Սա արդեն նշում է լ ձայնորդի կառուցվածքային առավելության, առավել լիահնչության և ձայնավորական ավելի շատ հատկություններ ունենալու մասին։ Մենք նպատակ ունենք այս հանդամանքը ճշտել փորձառական ուսում նասիրության միջոցով։

Ա. Այտընյանը շարադրում է նաև յ ձայնորդի երեք տարբեր գիտակցումները հայոց լեզվում. երբ այն բառավերջում է և չի արտասանվում (հին ուղղագրությամբ՝ երեխայ, տղայ և այլն), երբ բաղաձայնից առաջ է և լիահունչ բաղաձայն է (Հայկ և այլն) և երբ հ հնչույթի հնչումն ունի (հին ուղղագրությամբ յանդուգն և այլն)։

Յ-ի գիտակցումը մեր լեզվում, իհարկե, ավելի բազմազան է, քան տրվում է այստեղ հեղինակի կողմից (հիշենք յ-ի բաղաձայնական ֆունկցիան երկու ձայնավորների միջև. հայություն, բայական և այլն, կամ էլ նրա կիսաձայնավորական ֆունկցիան բաղաձայնի և ձայնավորի միջև. օրինակ՝ -թյուն, -թյան վերջավորությունները և այլն)։

Սակայն հարցն այն է, որ յ ձայնորդն իր որակով և դիրքային տարբերություններով առիթ է տվել տարակարծությունների։

Իր «Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի» աշխատության մեջ Ա. Այտընյանն, անդրադառնալով այս հարցին նշում է, որ հայոց լեզվի ներքին պահանջից է բխում այն իրողությունը, որ յ-ն մի տեղում կարող է հանդես գալ որպես ձայնավոր (մեյ մը, մեյ մեկ, իյնալ և այլն), մեկ այլ տեղում հ-ի նման՝ որպես բաղաձայն։ Այսպիսի դեպքերում Այտընյանը չ—ջ, գ—ք, ր—ռ և այլ զույգ ձևերի նման յ-ն դիտում է որպես հ-ի զույգ։

Ս. Պալասանյանը[5] յ և հ հնչույթները համարում է նույնահնչյուն, այն տարբերությամբ, որ յ-ն գրվում է միայն ձայնավորից առաջ բառասկզբում, իսկ հ-ն՝ թե ձայնավորից, թե բաղաձայնից։

Պալասանյանը բաղաձայն հնչյունները դիտում է հիմնականում իրենց զույգ ձևերի մեջ՝ ստորաբաժանելով նրանց նուրբ, միջակ և թանձր տեսակների և առանձնացնում է միայն մ և ն հնչյունները, որոնք չունեն իրենց համապատասխան երկրորդ ձևերը։

Հայ քերականներից Գր. Վանցյանն իր «Պատմական քերականություն արևելահայ լեզվի» աշխատությունում իրավացիորեն առարկելով հնչույթների ավանդական դասակարգման դեմ՝ գրում է.

«Սակայն հնչյունների այս բաժանումը (ձայնավորի և բաղաձայնի— Ա. Ա.), որ իբրև ավանդ հին քերականներից մեզ է հասել և սովորական դառել, ներկա հնչյունաբանությունը չի ընդունում։ Որովհետև այն հնչյուններից շատերը, որ սովորաբար մենք բաղաձայն ենք համարում, իրանց բնավորությամբ ավելի ձայնավորին են մոտ և շատ անգամ ավելի ձայնավորի դեր են կատարում, քան բաղաձայնի։ Մեր ր հնչյունը, օրինակ, կրկին, հետաքրքիր և այլ

---

4 Ա. Այտընյան, Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1883։

5 Ս. Պալասանյան, Գործնական քերականություն հայերեն լեզվի, Թիֆլիս, 1885։

ուրիշ շատ բառերում ավելի ձայնավոր է, նույնպես էլ ոյժ, գոյժ, այս, այդ բառերում յ ձայնավոր է, թեև մենք սովորաբար այդ երկու հնչյուններն էլ բաղաձայնների մեջ ենք դասում։ Այդ հնչյունները մի քանի հատ են։ Նրանք բռնում են ձայնավորների և բաղաձայնների միջին տեղը, ուստի և անվանվում են կիսաձայն կամ նայ հնչյուններ, և հետևյալներն են՝ լ, ղ, ռ, ր, մ, ն, (յ)»[6]։

Այսպիսով՝ հեղինակը բաղաձայններից առանձնացնելով ձայնորդների խումբը՝ նրանց համարում է հնչյունների ինքնուրույն դաս, որ որոշ յուրահատկություններով տարբերվում է թե՛ ձայնավորներից և թե՛ բաղաձայններից։

Հայերենի հնչյութային կազմի ուսումնասիրությունը մենք գտնում ենք Մ. Աբեղյանի աշխատություններում։ Տարբեր ժամանակներում լույս տեսած իր աշխատություններում, լինեն դրանք քերականագիտական ուսումնասիրություններ կամ դասընթացներ, թե լեզվաշինարարության խնդիրներին նվիրված դիսկուսիոն հոդվածներ, Մ. Աբեղյանն անդրադառնում է հայերենի հնչյութական համակարգին և մանրամասն շարադրում իր հայացքներն այդ առթիվ։ Հետաքրքրական է հատկապես այն մասը, որը վերաբերում է ձայնորդներին։

Այսպես, օրինակ՝ 1892 թվականին հրատարակված «Հայոց լեզվի ուղղագրությունը» ոչ մեծածավալ աշխատությունում Մ. Աբեղյանը ներկայացնում է ձայնորդների խումբը բավական ընդարձակ ձևով։ «վ, ր (ռ), ն, մ, ղ (խ) կոչվում են նայ (կակուղ) հնչյուններ,—գրում է հեղինակը,—որովհետև հեշտությամբ միանում են մյուս հնչյուններին»[7]։

Ջանդրադառնալով առայժմ այն հարցին, թե ինչո՞ւ այս հնչյունները հեշտությամբ միանում են մյուս հնչյուններին, նշենք, որ Մ. Աբեղյանը յ հնչյութը, ինչպես տեսնում ենք, չի մտցնում ձայնորդների հիշյալ խմբում։ Յ-ի մասին հեղինակը խոսում է առանձին՝ համարելով այն երկու հնչում ունեցող հնչյուն՝ բառասկզբում որպես բաղաձայն հ, բառամիջում՝ ձայնավորից հետո՝ կես-ձայնավոր՝ ի տարի հնչումով։ Հեղինակը կես-ձայնավոր է կոչում ամենակարճ ձայնավորները, որոնք կազմում են երկբարբառների բաղկացուցիչները։ Հայերենում ի ձայնավորն ունի այդ ֆունկցիան, որ գրաֆիկորեն արտահայտվում է յ տառով։ Այդ նույն յ-ն բառասկզբում դառնում է հագագային նուրբ հ բաղաձայն (Հակոբ, հաղթել և այլն)։

ռ և ռ ձայնորդները Մ. Աբեղյանը համարում է կրկնակ ձևեր, որոնք իրարից տարբերվում են միայն հնչումով։ Այդ պատճառով էլ հաճախ երկու ր-ին փոխարինում է մեկ ռ (տարր—տառ, երր—եռ և այլն)։

Դասակարգելով բաղաձայները ըստ արտասանության եղանակի՝ նուրբ, միջակ և թավ տեսակների, Մ. Աբեղյանը ղ և խ հնչյունները դասում է ձայնորդ բաղաձայնների կազմում. ղ՝ նուրբ, իսկ խ-ն՝ թավ։ Մյուս ձայնորդների որ կատեգորիային պատկանելը հեղինակի կողմից որոշակիորեն չի ասվում։ Միաժամանակ, երբ Աբեղյանը բաղաձայն հնչյունների դասակարգում է կատարում

---

6 Գր. Վանցյան, Պատմական քերականություն արևելահայ լեզվի, Թիֆլիս, 1906, էջ 170։

7 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի ուղղագրությունը. Թիֆլիս, 1892, էջ 7։

ըստ արտասանության տեղի, նա դասակարգում է առանց բացառության բոլոր ձայնորդ հնչույթները։

1906 թվին լույս տեսած «Աշխարհաբարի քերականություն» աշխատությունում[8] հիմք ընդունելով ձայնավորները և բաղաձայները տարբերակելու իր սկզբունքը, Մ. Աբեղյանը կիսաձայն է անվանում «երկբարբառի մեջ մտնող այն ձայնավորը, որն իբրև բաղաձայն բանելով՝ առանձին վանկ չի կազմում»[9]։

Հայոց լեզվում իբրև կիսաձայն հանդես է գալիս ի ձայնավորը, որը գրաֆիկորեն արտահայտվում է ն և յ տառերի միջոցով։ Այսպիսով՝ յ-ի բուն հընչումը հեղինակը համարում է ի կիսաձայնը (երկբարբառներ կազմելիս), սակայն միաժամանակ ավելացնում է, թե «յ-ն իր իսկական հնչումը պահում է միայն բառամիջում»։ Բառամիջում երկու ձայնավորների միջև այդ նույն հընչույթն արդեն ստանում է ձայնակապի պաշտոն (թի-ակ, ձի-ով, է-ակ և այլն)։

Փաստորեն ստացվում է, որ յ-ն չունի իր հիմնական հնչույթային որակը։

Այսպիսով՝ ձայնորդներին, հատկապես յ ձայնորդին որակելիս տեսական ընդհանրացումները դեռևս բավարար հիմք չեն կարող հանդիսանալ. այս դեպքում հարկ է դիմել միայն փորձառական մեթոդին։

Ժամանակակից հայերենի հնչույթների գիտական և առավել մանրամասն դասակարգումը մենք գտնում ենք Ս. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսություն» աշխատությունում[10]։

Այստեղ հեղինակը մի փոքր շեղվում է հնչույթների դասակարգման իր նախկին սկզբունքից և, մեր կարծիքով, ավելի ճշտում է այն։

Այս դեպքում Մ. Աբեղյանը հնչյունները բաժանում է երկու մեծ խմբի՝ ձայնեղների (թրթռունների) և անձայնների (խուլերի), իսկ ձայնեղներն իրենց հերթին ստորաբաժանում է ձայնավորների, ձայնորդ բաղաձայնների և ձայնեղ աղմկավոր բաղաձայնների։

Այսպիսով ձայնի և աղմուկի հարաբերության հատկանիշը ճիշտ կերպով ընդունելով որպես դասակարգման հիմք, և ձայնորդները դասելով ձայնեղ (թրթռուն) բաղաձայնների շարքը, հեղինակը հնարավորություն է տալիս իրականացնելու ձայնորդների հնչույթային հակադրությունը, որը ինչպես հայտնի է, հնչույթների դասակարգման հիմնական սկզբունքն է։

Ձայնորդների մասին խոսելիս Մ. Աբեղյանը նշում է, որ լ, ր, ռ, ն, մ ձայնորդ բաղաձայները «նույնպես հստակաձայն հնչյունների տպավորություն են թողնում»։ Սրանցից լ, ր, ռ կոչում է նայ (թաց), որպես ձայնավորներին առավել մոտիկ հնչյուններ։ Ր-ն համարում է նույն ռ-ն, միայն ր-ի դեպքում լեզվածայրի դողդողոցը շատ թույլ է։ Մ. Աբեղյանը շարադրում է միաժամանակ յուրաքանչյուր հնչույթի արտաբերական յուրահատկությունները՝ ըստ տեղի և ձայնական որակի։

Հետաքրքրական է, սակայն, որ Մ. Աբեղյանն իր աշխատություններում հնչույթների դասակարգման տախտակից պատահականորեն, թե օրինաչափորեն դուրս է թողել յ հնչույթը[11]։

Խոսելով հնչույթների վանկարար ֆունկցիայի մասին, Մ. Աբեղյանը նշում է, որ ձայնավորներն էլ երբեմն կարող են անվանկային հնչույթի դեր կատա-

8 Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906։

9 Նույն տեղում, էջ 17։

10 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931։

11 Նույն տեղում, էջ 87։

բել։ Դրանք, այսպես կոչված, թույլ ձայնավորներն են, որոնք կոչվում են նաև բաղաձայնական ձայնավոր կամ կիսաձայն։ Հայոց լեզվում նման ձայնավորի «դեր կատարում է միայն ի ձայնավորը, որը այս դեպքում նշանակվում է 3 տառով»[12]։ Դրանք միևնույն հնչյուններն են (ըստ արտաբերության տեղի և որակի) շարունակում է իր միտքը հեղինակը, և իրարից տարբերվում են միայն արտաբերության ուժով։ Յ-ն թույլ ի ձայնավոր է։

Չպետք է շփոթել, սակայն, զգուշացնում է Մ. Աբեղյանը, մեր կիսաձայն յ-ն այլ լեզուներում խիստ տարածված j-ի (յոտա) հետ։ Այդ երկուսի արտաբերության տեղը նույնն է, միայն j-ի դեպքում նեղվածքը փոքր է և հետևապես՝ շփումը և աղմուկը շատ։ Այս դեպքում յ-ն արտասանվում է և գործում իբրև բաղաձայն։

Փոխանցումը մի հնչյունից մյուսին՝ կատարվում է շատ հնչողությամբ կախված նրանից, թե ինչպիսի հնչյունաղիրքում է հանդես գալիս տվյալ հնչյունը։

Այսպիսով՝ դուրս է գալիս, որ միևնույն հնչյունը (ի) ժամանակակից լեզվում ունի երեք գիտակցում և 3 ֆունկցիա. ձայնավոր ի, կիսաձայն յ, և բաղաձայն j (յոտա)։ Սակայն զարմանալի է, որ հեղինակի ներկայացրած հնչյունների դասակարգման տախտակում կիսաձայն յ-ի կամ բաղաձայն j-ի գոյությունը չի արտացոլվում ո՛չ կիսաձայնների (ձայնորդների) շարքում և ո՛չ էլ, առավել ևս, բաղաձայնների շարքում[13]։

1939 թվին լույս տեսած «Ժամանակակից հայոց լեզվի տեսություն»[14], այնուհետև 1955 թ. լույս ընծայված «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց»[15] աշխատություններում Գ. Սևակը ներկայացնելով հայոց լեզվի հնչյունային համակարգը՝ Աբեղյանի սկզբունքով, ճշտում և կոնկրետացնում է նաև յ ձայնորդի տեղը։

Դասակարգելով հնչյունները նախ՝ ըստ ձայնային երանգի՝ թրթռունների և խուլերի (աղմկայինների), Գ. Սևակը նկատի է ունենում այն հանգամանքը, որ բոլոր հնչյունները, առանց բացառության, իրենց մեջ ունեն աղմուկ։ Այս հիմքի վրա էլ հեղինակը հնչյունները դասակարգում է նաև ըստ ձայնի և աղմուկի հարաբերության՝ ձայնավորների, ձայնորդների, ձայնեղների և անձայն (խուլ կամ աղմկային) հնչյունների։

Գ. Սևակը ձայնորդների խումբն է դասում հայերենի բոլոր վեց ձայնորդները տարբերակելով նրանք ըստ արտասանության մնացած հատկանիշների. լ, ր, ռ շփական առաջնալեզվային, բերանային. մ՝ շփական շրթնային, ռնգային. ն՝ շփական, առաջնալեզվային, ռնգային. յ՝ շփական, միջնալեզվային, բերանային։

Յ- ձայնորդի մասին հեղինակը նշում է, որ հայերենում այն լրիվ բաղաձայն չէ։ Իր արտաբերական առանձնահատկություններով յ-ն մոտենում է ձայնավորներին և իրավացիորեն կոչվում է կիսաձայն[16]։

Հնչյունների դասակարգման, այդ թվում նաև ձայնորդների նկատմամբ,

12 Նույն տեղում, էջ 89։

13 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1931, Երևան, էջ 87։

14 Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, Երևան, 1939։

15 Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955։

16 Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 88-ի ծանոթություն։

նոր մոտեցում ենք գտնում Գր. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանություն»[17] աշխատությունում։

Բաժանելով հնչյունները երաժշտական և աղմկային խմբերի, պրոֆ. Ղափանցյանը հնչույթները դասակարգում է ձայնավորների, բաղաձայնների և ձայնորդների։

Խոսելով ձայնորդների մասին՝ հեղինակը նշում է, որ դրանք իրենց բնույթով «կարող են լինել թե՛ բաղաձայն, թե՛ ձայնավոր և թե՛ դիֆտոնգի տարր»[18]։

Նկատի ունենալով ձայնի գերիշխող դերը՝ Գր. Ղափանցյանը ձայնավորներին և ձայնորդներին միացնում է իբրև մի խումբ սոնոր հնչյուններ։ Ձայնորդներն իրենց հերթին ստորաբաժանվում են նայերի՝ լ, ր, ռ, ռնգայինների՝ մ, ն, այնուհետև ձայնորդների խմբի մեջ մտնում է յ-ն։

Ձայնորդների էական հատկանիշը հեղինակը համարում է այն, որ ձայնորդ հնչույթները ըստ քանակի ընդհատվող չեն[19]. դրանով նրանք մոտենում են ձայնավորներին (իսկ բաղաձայնների խմբից՝ շփականներին)։

Ձայնորդների տարբերակիչ հատկանիշներից է նաև այն, որ հնչույթային ողջ համակարգում ձայնավորներից հետո նրանք ամենալիահունչն են։

Այսպիսով՝ որպես ձայնորդների տարբերակիչ և բնորոշ հատկանիշ նկատի է առնվում հնչույթի հնչեղության աստիճանը։

Հնչույթների դասակարգման տեսական մի քանի հարցերի անդրադարձել է Էդ. Աղայանը իր «Լեզվաբանության ներածություն» աշխատությունում[20]։

Հիմք ընդունելով հնչույթի հիմնական որակ հանդիսացող՝ ձայնի և աղմուկի հատկանիշը, Էդ. Աղայանը հնչյունները բաժանում է երկու խմբի՝ երաժշտական և աղմկային. առաջին խմբի մեջ հեղինակը դասում է ձայնավորներին և ձայնորդներին (որոնք ֆիզիկապես բնորոշվում են ձայնալարերի պարբերական թրթռումներով), երկրորդ խմբի մեջ՝ բաղաձայններին (որոնք կազմվում են ձայնալարերի ոչ պարբերական թրթռումներից կամ առանց թրթռումների)։

Տեղի տալով լեզուներում գործող հնչույթների ավանդական դասակարգմանը, Էդ. Աղայանը հայոց լեզվի հնչույթները դասակարգում է երկու մեծ խմբերի՝ ձայնավորների և բաղաձայնների։

Ձայնորդները բաղաձայններից առանձնացնելը և ինքնուրույն խումբ դիտելը հեղինակը համարում է սխալ։ Որպես հիմք հնչույթների դասակարգման համար Էդ. Աղայանը առաջ է քաշում իր սկզբունքը՝ հնչյունի մեջ ձայնի առկայությունը և արտասանության տեղայնացման աստիճանը։ Ըստ այսմ՝ ձայնորդներն անցնում են բաղաձայնների շարքը (չնայած նրան, որ «ամենաաղմկային ձայնորդները (մ, ն) ավելի շատ ձայն ունեն և քիչ աղմուկ, քան ամենից առավել ձայն պարունակող ձայնեղները (զ, ժ, և այլ)»[21]։

Հայերենի ձայնորդների բաղաձայնների շարքը դասելու մյուս հիմքը հեղինակը իրավացիորեն համարում է այն, որ հայերենում գոյություն ունի յուրաքանչյուր ձայնորդի միայն մեկ տեսակ, որը մեր լեզվում չունի վանկա

---

17 Գր. Ղ ա փ ա ն ց յ ա ն, Ընդհանուր լեզվաբանություն, 1 մաս, Երևան, 1939։

18 Նույն տեղում, էջ 50։

19 Նույն տեղում, էջ 64։

20 Է դ. Ա ղ ա յ ա ն, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1952։

21 Նույն տեղում, էջ 131։

բար ուժ։ Իսկ այն լեզուներում, որտեղ ձայնորդները կարող են հանդես գալ իբրև ձայնավոր, առկա է այդ ձայնորդների նաև բաղաձայն տարբերակը (օրինակ՝ չեխերենի երկու տեսակ r և l հնչյունները և այլն)[22]։

* * *

Հայոց լեզվի վեց ձայնորդներից հինգի մասին (լ, ր, ռ, մ, ն) մենք կարող ենք ասել, որ նրանք բաղաձայն հնչույթներ են, չունեն իրենց երկրորդ տարբերակը, որը կարողանար որպես ձայնավոր հանդես գալ և հետևապես՝ չունեն վանկարար ուժ։ Մեր լեզվի զարգացումը տանում է դեպի այդ ձայնորդների լիակատար բաղաձայնացումը։

Սույնը չենք կարող ասել, սակայն, յ ձայնորդի վերաբերյալ։ Նրա փոփոխական ֆունկցիան լեզվի մեջ, այն, որ յ-ն տարբեր հնչյունադիրքերում հանդես է գալիս մեկ իբրև ձայնավոր, մեկ իբրև բաղաձայն, ինչպես ավանդաբար ընդունված է ասել, հիմք է տալիս մեզ ենթադրելու, որ հայերենում էլ, ինչպես մի քանի այլ լեզուներում, գործում է երկու յ։ Ոչ թե միևնույն հնչյունը զանազան հնչյունադիրքերում հանդես է բերում տարբեր հնչյունաորակ, այլ տարբեր հնչյունադիրքերում գործում են տարբեր հնչյուններ, որոնք, սակայն, մինչև այժմ գրաֆիկորեն միմյանցից չեն տարբերակվել։

Այսպես, օրինակ՝

հայ-կա-կան, բա-յա-կան, միմ-յանց, նա-յել, հա-յե-լի, գո-յու-թյուն, հանքա-յին և նման բազմաթիվ բառերում ընդգծված յ-ն լիարժեք բաղաձայն է (կարելի էր նշանակել j—տառով)։ Իսկ ասենք՝ բնու-թյուն, բազմու-թյուն, մա-տյան, ձյու-նածածկ, բյու-բավոր, հյու-սել, հն-չյուն և նման բազմաթիվ բառերում յ-ն կորցնում է իր բաղաձայնական ֆունկցիան։ Հակառակ դեպքում վանկատման ժամանակ այն չէր կարող մնալ բաղաձայնի հետ նման կապակցության մեջ՝ համապատասխան հայոց լեզվի այն օրինաչափությանը, որ մեր լեզուն խուսափում է բաղաձայնների կուտակումից։

Ձայնորդները մենք չենք կարող դասակարգել ըստ ձայնի մասնակցության, քանի որ բոլոր ձայնորդներն էլ ձայնեղ են[23]։

Այսպիսով՝ ձայնեղության հատկանիշը, որպես հնչույթային հակադրման հատկանիշ, տվյալ կիրառությամբ չի կարող դրական արդյունքներ տալ։ Մնում է ձայնորդների հակադրումը՝ ըստ արտասանության տեղի և եղանակի։

Հիմք ընդունելով Մ. Աբեղյանի սկզբունքները՝ հայերենի հնչույթային համակարգի մասին, Վ. Առաքելյանը իր «Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն» աշխատությունում[24] ներկայացնում է հայոց լեզվի հնչույթային կազմի մասին իր տեսակետները, որոնց մի քանիսի վրա կուզենայինք կանգ առնել։

Դասակարգելով ձայնորդները, որպես բաղաձայնների դասի մեջ մտնող առաջին խումբ ըստ ձայնային երանգի, Վ. Առաքելյանը նշում է, որ «մեր լեզ-

---

22 Է. Ղ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, էջ 131։

23 Իհարկե, ձայնորդները կարող են լինել մեկը մյուսից առավել կամ նվազ հնչեղ։ Այսպես, օրինակ՝ ռուսական հնչյունաբանության մեջ ենթադրվում է, որ ամենից հնչեղ ձայնորդը l-ն է։ Փորձառական մեր ուսումնասիրության ընթացքում մենք նպատակ ունենք ստուգելու այդ՝ հայոց լեզվի նկատմամբ։

24 Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, Երևան, 1955։

վում ձայնորդներն իրենց ձայնեղությամբ քիչ են տարբերվում բաղաձայններից, իրենց ֆունկցիայով միշտ բաղաձայն են»[25]։

Ձայնորդների բաղաձայնացման այս տենդենցը իրականում առկա է մեր լեզվում։ Ինչ վերաբերում է յ ձայնորդին, ապա այն ևս ժամանակակից հայերենում ավելի կայունացրել է իր ֆունկցիան՝ ավելի հաճախ հանդես գալով բաղաձայնական ֆունկցիայով։ Այնպես որ պրոֆ. Աբեղյանի այն կարծիքը, թե «մեր վանկային ի ձայնավորը և անվանկային կամ բաղաձայնական (կիսաձայն) յ ձայնավորը իսկապես միևնույն հնչյուններն են. յ հնչյունը թույլ, փակ ի ձայնավոր է» (սրա դեմ առարկում է նույնպես Վ. Առաքելյանը[26]), պետք է ընդունել վերապահությամբ։

Ինչպես վերևում մեկ անգամ նշեցինք, յ ձայնորդը ըստ էության այլևս կապ չունի մեր ի ձայնավորի հետ, եթե նույնիսկ նկատի չունենանք այն հանգամանքը, որ ի-ն և յ-ն, ինչպես հնչյունաորակով, այնպես էլ ըստ արտասանության տեղի, չեն համընկնում։ Այնպիսի բառերում, ինչպես ասենք՝ հայել, նայել, բայական, Հայր-յան և այլն ընդգծված յ-ն շատ և շատ լեզուներում տարածված յոտա (j) բաղաձայնն է, որը հնչյութաբանորեն հակադրվում է մնացած հնչյուններին։

Այնպիսի կապակցություններում, ինչպես ասենք՝ բնութ-յուն, հնչյուն-վայրկյան, համքյար, Արամյան և այլն, յ-ն պահպանելով հանդերձ ձայնավորական որոշ յուրահատկություններ, այնուամենայնիվ ձգտում է բաղաձայնեցման։ Դրա լավագույն ապացույցն է մեր գրավոր լեզվում գոյություն ունեցող վերոհիշյալ կապակցությունների երկձև վանկատումը (վայր-կյան, վայրկ-յան, բնու-թյան և բնութ-յան, Արա-մյան և Արամ-յան, սե-նյակ և սեն-յակ և այլն)։

Ձայնորդների փորձառական ուսումնասիրությունն, իհարկե, շատ նոր բան կարող է ասել նրանց բնույթի և որակի վերաբերյալ։

* * *

Հնչյութների դասակարգումը՝ ըստ ֆիզիկական-ակուստիկական հատկանիշների ընդհանուր է այն տեսանկյունից, որ բոլոր լեզուների հնչյութները ենթակա են այդ դասակարգմանը։

Ռուս լեզվաբանության մեջ կան տարակարծիքներ հնչյութների դասակարգման հարցի շուրջը։

«Ըստ ավանդական բաժանման,—գրում է Ա. Ի. Տոմսոնը,—խոսքի հնչյունները բաժանվում են ձայնավորների և բաղաձայնների... Բաղաձայններից հարկավոր է անջատել թացերը (плавные) (l և r՝ առանց թրթռոցի) և ռնդայինները (m և տարբեր n-երը), որոնք ձայնավորների հետ կազմում են սոնոր հնչյունների դասը։ Մնացած բաղաձայնները կազմում են աղմկային հնչյունների կամ աղմկային բաղաձայնների դասը»[27]։

Քանի որ սոնոր հնչյունները կամ, ինչպես հայերենում անվանում ենք, ձայնորդները ըստ նրանց ակուստիկական հատկանիշների դժվար է առանց վերապահման դասել ձայնավորների կամ բաղաձայնների շարքը, ապա նպատակահարմար են գտել նրանց համար կազմելու միջանկյալ մի ենթախումբ։

---

25 Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, էջ 27։

26 Նույն տեղում, էջ 28—29։

27 А. И. Томсон, Общее языковедение, Одесса, 1910, էջ 186։

«Ավելի ճիշտ կլիներ ասել,—գրում է այս առիթով Լ. Ռ. Զինդերը,—թե ակուստիկական տեսանկյունից չկա բավարար հիմք այն բանի համար, որպեսզի սոնոր հնչյունները, հատկապես այսպես կոչված «թացերը» «l» և «r» համարենք բաղաձայն և ոչ թե ձայնավոր»[28]։

Լ. Ռ. Զինգերը նկատի ունի այն հանգամանքը, որ հնչյունների երաժշտականի և աղմկայինի բաժանելը նույնպես չպետք է անվերապահորեն ընդունել, քանի որ ամենաերաժշտական հնչյուններն անգամ (ձայնավորները) իրենց մեջ ունեն որոշ մաս աղմուկ, իսկ, ասենք, ձայնեղ բաղաձայնները զուրկ չեն երաժշտական տոներից։ Այսպիսի պարագաներում, իհարկե, ձայնորդների որոշակի խմբին դասելը ավելի է դժվարանում, քանի որ նրանք գտնվում են ձայնավորի և բաղաձայնի միջև մի միջանկյալ օղակ։ Լ. Ռ. Զինգերը առավել լիակատար և գիտական է համարում Բոդուեն դե Կուրտենեի կարծիքը հնչյունների բաժանման վերաբերյալ։

Բոդուեն դե Կուրտենեն գտնում էր, որ հնչյունները տարբերակելիս պետք է նկատի ունենալ նրանց արտաբերման ժամանակ առաջացող արտասանական օրգանի լարվածության տեղայնացման աստիճանը։ Բաղաձայնի դեպքում այդ լարվածությունը ունենում է խիստ կոնկրետ և սահմանափակ տարածվածություն, ձայնավորների դեպքում՝ լարվում է ողջ արտասանական ապարատը և կատարվում է այսպես կոչված տարածված տեղայնացում։

Այսպես՝ ասենք ի և յ հնչյունների միջև արտասանական տարբերություններն այն են, որ ի արտասանելիս լարվում է ամբողջ բերանային արձագանքարանը և ամբողջ լեզուն, իսկ յ-ի արտասանությունն իրականանում է միայն լեզվի միջին մասի բարձրացմամբ և լարմամբ։ Հեղինակը, այսպիսով, ուղղակիորեն չխոսելով ձայնորդների՝ հնչյունների այս կամ այն դասին պատկանելու մասին, առաջարկում է սկզբունքներ, որոնք մեծապես օգնում են այդ հարցը ավելի որոշակիորեն լուծելու։

Ֆ. Ֆ. Ֆորտունատովի մոտ նույնպես ձայնորդների բնութագրումը կատարվում է որոշ վերապահությամբ։ «Սոնոր բաղաձայնները,—գրում է նա,—իրենց կազմության պայմաններով ավելի մոտ են ձայնավորներին, քան բաղաձայններին։ Սոնոր բաղաձայնների դասին են պատկանում նախ թաց բաղաձայնները և այնուհետև՝ ռնգային բաղաձայնները»[29]։

Հետագայում ևս ռուս լեզվաբանության մեջ հնչյունների դասակարգման և, հատկապես, ձայնորդների նկատմամբ լեզվաբանների կողմից պահպանվել է այն ավանդական սկզբունքը, որ շարադրվում է Ա. Ի. Բոդուեն դե Կուրտենեի, Ֆ. Ֆ. Ֆորտունատովի, Լ. Վ. Շչերբայի կողմից։

Հետաքրքիր և գիտական մանրամասնությամբ է շարադրում իր հայացքներն այդ հարցի նկատմամբ պրոֆ. Ա. Ա. Ռեֆորմատսկին իր «Введение в языкознание» աշխատությունում[30]։

Ամենից առաջ Ա. Ա. Ռեֆորմատսկին ըստ ավանդության բոլոր հնչյունները բաժանում է ձայնավորների և բաղաձայնների։ Բաժանման հիմքում կարող են ընկնել ինչպես ակուստիկական, այնպես էլ արտաբերական հատ-

---

[28] Л. Р. Зиндер, Общая фонетика, Ленинград, 1960, էջ 108։
[29] Ф. Ф. Фортунатов, Избранные труды, հ. II, էջ 59—60։
[30] А. А. Реформатский, Введение в языкознание, М., 1955.

կանիշներ։ Ակուստիկորեն հեղինակը հնչյունները բաժանում է սոնորների (հնչեղների) և աղմկայինների[31]։

Այդ երկու բևեռների միջև,—դրում է նա,—ձայնավոր a-ի տիպի մաքուր տոնային հնչյունի և ... մաքուր աղմկային, խուլ, ակնթարթային, աղմկային п տիպի հնչյունների միջև գտնվում են սոնորայիններից դեպի աղմկայինները անցնող հնչյունները»[32]։

М, Н, Л, Р, Й, W ձայնորդ բաղաձայները հանդիսանում են ձայնավորները բաղաձայների հետ կապող շղթայի առաջին օղակը։

«Грамматика русского языка»[33] աշխատությունում հնչյունների դասակարգման և ձայնորդների նկատմամբ գրականության մեջ եղած ավանդական սկզբունքը հիմնականում պահպանված է։

Միայն հեղինակները м, н, л, р, й հնչյունները ձայնորդների դասի մեջ խմբավորելը պատճառաբանում են նրանով, որ սրանք չունեն իրենց համապատասխան խուլերը և հետևապես կարելի է այս հնչյունները հակադրել մնացած բոլոր բաղաձայններին (քանի որ ռուսաց լեզվում բոլոր բաղաձայններն ունեն իրենց խուլ զույգերը. б—бъ. п—пъ և այլն[34], ուրիշ խոսքով սոնոր բաղաձայններին հակադրել բոլոր աղմկայինները։

Այսպիսով՝ ձայնորդները բնութագրելիս հիմնական գործոնն ընդունվում է ձայնեղության առկայությունը, այն, որ ձայնորդները սովորաբար ինչպես բառավերջում, այնպես էլ խուլերից առաջ չեն կորցնում իրենց ձայնեղությունը (էջ 131, 132)։ Սրանով էլ նրանք համարյա թե նույնանում են ձայնավորներին։ Հետևապես՝ ձայնորդների որակական բնորոշման և հնչյութային համակարգում նրանց հնչյութային հակադրման համար փաստորեն ընդունվում է միայն մեկ հատկանիշ՝ ձայնեղության առկայությունը կամ բացակայությունը։ Իսկ ինչ վերաբերում է հնչյութային մնացած հատկանիշներին՝ հնչյունի կազմավորման եղանակին, վանկարարության աստիճանին և այլն, ապա դրանք տվյալ դեպքում էական նշանակություն ունենալ չեն կարող։

Նման կարծիքը ձայնորդների բնորոշման հարցում մեզ թվում է միակողմանի և ոչ սպառիչ։

Ձայնեղության հատկանիշն, իհարկե, հնչյութը բնորոշող հնչյութային կարևոր հատկանիշներից մեկն է, բայց ոչ միակը։

Ձայնորդների դասակարգման մյուս խիստ կարևոր հատկանիշներից է հնչյունի կազմավորման եղանակը, այն, թե տվյալ ձայնորդի արտասանությունը որքանով է տեղայնացած։

Այս տեսանկյունից մոտենալով խնդրին՝ մենք հնչյունների դասակարգման հարցում միանում ենք պրոֆ. Աղայանի տեսակետին։

Համարելով միակողմանի հնչյութների դասակարգման ավանդական տեսակետը[35], պրոֆ. Աղայանը որոշակիորեն հայտնում է իր կարծիքը այդ հարցի կապակցությամբ։

---

31 Նույն տեղում, էջ 134։

32 Նույն տեղում, էջ 135։

33 «Грамматика русского языка под ред. В. В. Виноградова, Е. С. Истрина, С. Г. Бархударова», М., 1960, ч. I.

34 «Грамматика русского языка», մաս 1, էջ 51։

35 Է. Ղ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1952, էջ 120—122։

«Մեր կարծիքով,—գրում է նա,—ձայնավորների և բաղաձայնների բնորոշման համար մենք երկու հիմունք պետք է ունենանք. նախ՝ այդ երկու խմբերի որակական տարբերությունը՝ ըստ ձայնի, ապա՝ նրանց կազմավորման-արտաբերման յուրահատուկ բնույթը»[36]։

Այնուհետև պրոֆ. Աղայանը նշում է, որ այդ հիմունքներից մեկը ձայնի առկայության աստիճանն է, մյուսը՝ կազմավորման տեղայնացումը։

Հիմք ընդունելով վերոհիշյալ տեսակետը հնչույթների բնութագրման՝ հարցում՝ կարող ենք ասել, որ հայերենի ձայնորդները որոշակիորեն բավարարում են բոլոր այն պահանջները, որոնք անհրաժեշտ են բաղաձայնների խմբին դասվելու համար։

* * *

Մի քանի խոսքով կկամենայինք անդրադառնալ հնչեղություն (սոնորություն) ընդհանրապես և հնչեղ (սոնոր) հասկացությունների ըմբռնման հարցին։

Հնչեղություն կամ հնչյունների հնչեղանալ հասկացությունները առավել չափով օգտագործվում է բաղաձայնների նկատմամբ այն առումով, որ հնչեղանալը կապված է բաղաձայնի մեջ աղմկային հատկանիշների թուլանալու կամ անհետանալու հետ։

Հնչեղությունը հնչյունի հնչույթային հատկանիշն է, իսկ հնչույթային հատկանիշը, որը կարող է լինել մեկ կամ ավելի, հնչույթի որակն է։

Հնչեղությունը որպես որակական հատկանիշ բխում է հնչյունի էությունից։ Դա հնչյունի մշտական հատկությունն է, որը պայմանավորվելով նրա արտասանությամբ ընկնում է հնչույթի որակական տարբերակման հիմքում։

Արտասանության սուբյեկտիվ տարբերությունները (արտասանական ռեգիստրների տարբերությունը, արտասանական օրգանների տարբեր լարվածությունը, տոնի բարձրությունը և այլն) չեն կարող ազդել հնչույթի հնչեղության հատկության վրա. բ բաղաձայնը ինչպես շշուկով, այնպես էլ բարձրաձայն արտասանելիս կպահպանի իր հնչեղությունը, իսկ կորցնելու դեպքում այն այլևս կդադարի հնչեղ բ լինելուց, կվերածվի խուլ պ-ի կամ շնչեղ-խուլ փ-ի։

Հնչեղության կարևոր գործոններից է ձայնի առկայությունը տվյալ հնչույթի կազմում և այն արձագանքարանը, որտեղ ձևավորվում է այդ հնչույթը։

Հետևապես՝ երկու հնչույթների հնչեղության աստիճանները համեմատելու և ստուգելու համար հարկավոր է ստեղծել հնչույթների արտասանական համազոր պայմաններ, հատկապես արտասանական օրգանների հարաբերականորեն կայուն լարվածություն և արտասանության հարաբերականորեն կայուն ուժգնություն։ Նման պայմաններում արտասանելով բաղաձայնների ցանկացած զույգը, օրինակի համար, վ—ֆ, նկատում ենք, որ վ բաղաձայնի արտասանության համար պահանջվում է արտասանական օրգանների ավելի քիչ լարվածություն, արտաշնչվող օդի ավելի թույլ հոսանք՝ ձայնի առկայությունը։ Ընդհանուր հնչյունաբանության մեջ նման արտասանությունը կոչում են բույլ, իսկ այդ արտասանությունն իրականացնող հնչույթները՝ բույլ հնչույթներ։ Ֆ բաղաձայնի արտասանությունը, ի տարբերություն վ-ի, աչքի է ընկնում արտասանական օրգանների առավել լարումով, արտաշնչվող օդի հոսանքի

36 Է. Ղ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1952, էջ 122։

ավելի մեծ ուժով, իսկ ձայնը ֆ-ի արտասանության դեպքում բացակայում է. այս արտասանությունը կրում է ուժեղ անվանում, իսկ այն իրականացնող հնչյունները՝ ուժեղ հնչյուններ:

Այս տեսանկյունից հնչյունները կարելի է դասակարգել հետևյալ ձևով՝ սկսելով թույլերից՝ ձայնավորներ, ձայնորդներ, ձայնեղ բաղաձայններ, խուլ բաղաձայններ:

Վանկի տեսության հարցերը քննարկելիս լեզվաբանության մեջ հետաքրքիր կարծիքներ են հայտնվել հնչյուններն ըստ հնչեղության դասակարգելու վերաբերյալ[37]:

Եսպերսենն, օրինակ, ըստ հնչեղության հնչյունները հետևյալ ձևով է դասակարգում (ըստ հնչեղության ավելացման)[38]:

1. Խուլ պայթական բաղաձայններ՝ p, t, k
2. Խուլ շփական բաղաձայններ՝ f, s, x, ç
3. Ձայնեղ պայթականներ՝ b, d, g
4. Ձայնեղ շփականներ՝ v, z, γ
5. Ռնգայիններ՝ m, n, γ
6. Կողքայիններ՝ l
7. Թրթռուններ՝ r
8. Վերին բարձրացման ձայնավորներ՝ ɪ, y, u
9. Միջին բարձրացման ձայնավորներ՝ e, Ø, o
10. Ստորին բարձրացման ձայնավորներ՝ a, ɔ, ɤ

Եթե նկատի ունենանք հնչյունների լարվածության աստիճանը, այսինքն՝ արտասանության ուժեղությունը կամ թուլությունը, ապա կարելի է ասել, որ տեսականորեն հնչյունների այս աստիճանավորումը համոզիչ է[39]: Սակայն միայն տեսական համոզվածությունը բավարար հիմք չի կարող ծառայել հնչյունների նման դասակարգման համար: Միայն փորձառական ուսումնասիրության տվյալները կարող են լիարժեք հիմք տալ՝ վերջնական եզրակացությունների համար:

Հնչեղությունը, որպես հնչյունի որակական և մշտական հատկանիշ, հատուկ է ձայնավորներին, ձայնորդներին և ձայնեղ բաղաձայններին (շփականներին ավելի շատ, քան պայթականներին), չնայած այն հանգամանքին, որ ինչպես ամենահնչեղ հնչյունն անգամ իր մեջ ունի որոշ աղմկային տարրեր, այնպես էլ ամենաաղմկային ոչ հնչեղ հնչյուններն անգամ իրենց կազմում պարունակում են որոշ տոներ: Դրանք, սակայն, հնչյունի կազմում որակ չեն կազմում:

Այսպիսով՝ հնչեղությունը որպես ընդհանուր հնչյունային հատկանիշ նյութական է և մտնելով հնչյունի ակուստիկական կազմի մեջ՝ ենթակա է ֆիզիկական ուսումնասիրման: Նման ուսումնասիրությունը կարող է իրականանալ շնորհիվ այն կոնկրետ օբյեկտների, որոնք լեզվի մեջ հադես են գալիս որպես

37 Այս տեսության ներկայացուցիչները վանկի նկատմամբ այն տեսակետն են պաշտպանում, որ վանկի կազմում ձայնավորի առկայությունը պարտադիր գործոն չէ: Վանկ կազմելու համար անհրաժեշտ է, որ կապակցվող հնչյունները տարբերվեն ըստ հնչեղության:

38 Տե՛ս Л. Р. Зиндер, Общая фонетика, Ленинград, 1960, էջ 281:

39 Հարցի պարզաբանումը տես նշված աշխ., էջ 50:

այդ ընդհանուր հատկանիշը կրողներ, ուրիշ խոսքով՝ շնորհիվ լեզվի հնչույթների։

* * *

Ձայնորդները ձայնավորներից հետո ամենահնչեղ հնչույթներն են։ Ձայնորդների յուրահատուկ բնույթը, նրանց ընդհանրությունները մի կողմից՝ ձայնավորների, մյուս կողմից՝ բաղաձայնների հետ, հնարավորություններ ստեղծելով հանդերձ այդ հնչույթների բազմակողմանի ուսումնասիրության համար, միաժամանակ խիստ դժվարությունների առաջ են կանգնեցնում յուրաքանչյուր ուսումնասիրողի։

Ուսումնասիրությունը սկսելուց առաջ յուրաքանչյուր հետազոտող իր համար պետք է պարզի մեկ հարց. ի՞նչ տեսանկյունով է հարկավոր մոտենալ ուսումնասիրվող հարցին, տվյալ դեպքում ձայնորդներն ուսումնասիրելիս ի՞նչ սկզբունքից պետք է ելնել։

Այստեղ հարցն անմիջականորեն առնչվում է հնչյունների դասակարգման սկզբունքի հետ։

Մեր նախնական հետազոտությունները ցույց են տվել, որ ձայնորդներին մյուս հնչեղ հնչույթներից տարբերելու մի կարևոր մոմենտ կա, որը չի կարելի աչքաթող անել։ Դա ձայնորդների արտասանության մեջ ոնգայնության առկայությունն է։ Տարբեր ձայնորդների մոտ այդ գործոնն, իհարկե, տարբեր չափով է հանդես գալիս։

Առայժմ սա միայն նախնական ենթադրություն է, որը հույս ունենք հետագայում հաստատել փորձառական ուսումնասիրության հիմքի վրա։

Նկատի ունենալով ձայնորդների առավել գործողֆունկցիան մեր լեզվում, այն, որ լեզվի զարգացման օրինաչափությունները տանում են դեպի ձայնորդների բաղաձայնացում (և ընդհանրապես լեզվական միավորների ֆունկցիաների կայունացում), մենք ձայնորդները դասում ենք բաղաձայնների շարքը և ուսումնասիրության ընթացքում դիտում ենք նրանց որպես ոնչեր բաղաձայններ[40] (ի տարբերություն ձայնեղ բաղաձայնների)։

Հնչույթների տարբերակման հիմքում ընդունելով երեք հիմնական գործոն՝ արտասանական օրգանների վիճակը, նրանց լարվածության աստիճանը և արտաշնչվող օդի հոսանքի ուժը, մենք տարբերակում ենք այն վիճակները, որոնք ձայնորդներին մոտեցնում են մի կողմից ձայնավորներին, մյուս կողմից՝ բաղաձայններին։

Ըստ առաջին գործոնի՝ արտասանական օրգանների վիճակի, հայերենի ձայնորդների արտասանությունը կրում է տեղայնացած բնույթ։ Այդ տեսակետից լ, մ, կամ ն ձայնորդների և ասենք ձ, ծ, կամ ֆ բաղաձայնների արտասանության միջև ոչ մի սկզբունքային տարբերություն մենք չենք նկատում այն պարզ պատճառով, որ նման տարբերություն գոյություն չունի։

Ուրեմն՝ ըստ առաջին գործոնի ձայնորդները դիտվում են որպես սովորական բաղաձայններ։

Համեմատական քննությունից ելնելով մենք նկատում ենք, որ խոսքի օրգանների լարվածության աստիճանը ձայնորդների արտասանության ժամա-

---

40 Նկատի ունենալով սովորության ուժը՝ մենք կշարունակենք այդ հնչյունները անվանել ձայնորդներ։

նակ (երկրորդ գործոն) չնայած թույլ, բայց և այնպես առկա է և առկա է կոնկրետացած վիճակով, որը հաստատում է վերը հիշված առաջին գործոնի՝ տեղայնացած արտասանության առկայությունը։

Հետևապես՝ այս տեսանկյունից նույնպես ձայնորդները հարում են բաղաձայններին։

Ձայնորդների ձայնավորների հետ ունեցած հիմնական ընդհանրությունը ձայնի առկայությունն է, որը որակ է կազմում այդ հնչույթների մոտ. մյուս ընդհանրությունը արտասանվող օդի հոսանքի համեմատաբար թույլ լինելն է։ Այս վերջինն անմիջականորեն կապված է ձայնի առկայության և խոսքի օրգանների լարվածության աստիճանի հետ։

Որքան ձայնի մասնակցությունը քիչ է արտասանության պրոցեսում, այնքան խոսքի օրգանների լարվածությունը մեծ է, և արտաշնչվող օդի քանակը շատ։ Նման պայմաններում իրականացվող արտասանությունը կարող ենք անվանել ուժեղ կամ ծանր: Ուժեղ արտասանություն ունեն հայերենի բոլոր խուլ բաղաձայնները։

Որքան ձայնի մասնակցությունը մեծ է արտասանության պրոցեսում, այնքան խոսքի օրգանների լարվածությունը քիչ է, և արտաշնչվող օդի քանակը՝ փոքր։ Նման պայմաններում իրականացվող արտասանությունը կարող ենք անվանել թույլ կամ թեթև: Թույլ արտասանություն ունեն հայերենի ձայնավորները։

Այսպիսով, ելնելով վերը շարադրված սկզբունքից, մենք կարող ենք կազմել հնչույթային մի շղթա, որի առաջին անդամը կլինի ա ձայնավորը, որպես ամենաթեթև արտասանվող հնչույթ, իսկ շղթայի եզրափակիչ անդամը կդառնա խուլ պայթական պ բաղաձայնը, որպես ամենածանր արտասանություն ունեցող հնչույթ (ա. . . . . .պ)[41]. մնացած հնչույթները որոշակի տեղաբաշխվում են այս ծայրանդամների միջև։ Ձայնորդներն այս շղթայում դրվում են երկրորդ կարգը՝ ձայնավորներից հետո։

* * *

Ձեռնարկելով գրական հայերենի ձայնորդների փորձառական ուսումնասիրությանը, մենք նպատակ ենք դրել բացահայտել նախ՝ հնչյունների նախնական ակուստիկական հատկանիշները։ Մյուս նպատակն է եղել բացահայտել ձայնորդների երկրորդական ձայնական հատկանիշները (հնչյունի հիմնական տոնը, ուժգնությունը, արտասանության տևողությունը և այլն)։

Նպատակ ունենալով բացահայտել ձայնորդ հնչյունների նախնական ակուստիկական հատկանիշները, մենք ուշադրության ենք առել հետևյալ գործոնները. հնչյունի հիմնական տոնը, արտասանության ուժգնությունը, տևականությունը և վերջինիցս բխող՝ հնչյունի երկարությունը, հնչյունի տիրույթային (ֆորմանտային) կազմը, հնչյունի սպեկտրի պատկերը, նրա փոփոխման ու զարգացման ընթացքը և այլն։ Մեր խնդիրն է եղել նաև կատարել

---

41 Մնացած հնչույթների տեղաբաշխումը որոշակիորեն ճշտելու համար հարկավոր է դիմել փորձառական ուսումնասիրության օգնությանը, քանի որ այն հարցը, օրինակի համար՝ թե ձայնեղ պայթականներն են առավել հնչեղ, թե խուլ շփականները, կարող է բացահայտվել միայն նման հետազոտության ընթացքում։ Դա կարող է առանձին ուսումնասիրության նյութ ծառայել։

հնչյունների սպեկտրային պատկերների համեմատական ուսումնասիրությունը, ինչպես նաև ներկայացնել հնչյունների համեմատական պատկերը՝ ըստ վերոհիշյալ մնացած գործոնների։

Այդ սկզբունքներից ելնելով էլ ուսումնասիրության համար մենք այնպիսի հնչյունադիրքեր ենք ընտրել, որտեղ ձայնորդների ինքնուրույն որակը ամենից ավելի անաղարտ ձևով է ներկայանում։ Նման կարգի հետազոտության անհրաժեշտությունը պատճառաբանվում է նրանով, որ համեմատական ուսումնասիրություն սկսելուց առաջ հարկավոր է նախ՝ պարզել համեմատվող օբյեկտների որակը առանձին վերցրած և ապա միայն ուսումնասիրել դրանց զանազան կողմնակի ազդեցություններով հանդերձ։

Դա իհարկե, չի նշանակում, թե ձայնորդը բոլորովին զերծ է մնում հնչյունական դիրքային ազդեցություններից։ Բոլոր դեպքերում հնչյունական շրջապատը թողնում է իր ասիմիլյատիվ ազդեցությունը։ Այնպես, որ հնչյունների, այսպես կոչված, ազդեցական դիրքը խիստ պայմանական է և անպայմանորեն նկատի ունի ազդեցության նվազագույնը։ Դա կարող է ապահովվել միայն ձայնորդների՝ ձայնավորների (և ոչ մեկ այլ հնչյունի) հետ ունեցած հարևանությամբ, քանի որ ձայնավորների արտասանության պրոցեսում լեզվի բարձրացման աստիճանը (այսինքն՝ մլուս օրգանների հետ նրա ունեցած հպման կամ շփման մոմենտը) հասնում է նվազագույնի։

Քանի որ ձայնորդները, որպես հնչյունական առանձին դաս, մինչև այժմ ուսումնասիրության առարկա չեն հանդիսացել (նաև ռուսական հնչյունաբանության մեջ), ապա մենք մեր հետազոտությունն այդ ասպարեզում համարում ենք միայն նախնական։